

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏՍՍԱԶՄԱՆ

Ղրգ.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Յր

ՏԱՐԵԿԱՆ... 15

ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 33

Տ. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿ. ԵՐԷՅԵԱՆ

ՈՒ

ԿԻՂԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ



Փա՛նֆ Աստուծոյ, վերջապէս լուծուեցաւ այս կնեոս հարցն ալ, Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան հարցը կ'ըսեմ, որ այնքան սարիներէ ի վեր կը ձգձգուէր ի վնաս Սոյ Աթոռին ու Կիլիկիոյ բոլոր Թեմերուն, Դեան ու մեր Պատրիարքարանին համեմատելի փողոտականութեան հետեւանինով:

Ամսոյս 12 ին հինգգարքի օրը Գեորգ Տ. Սահակ Սրբազան Խապատեանի նախագահութեան շակ տեղի ունեցաւ Ընտրողական Ժողովի պատմական նիստը, Ասանայի Մայր Եկեղեցիին մէջ, ուր վերջնապէս պիտի ընտրուէր Կաթողիկոսը Կիլիկիոյ այրիացած Տան:

Ու ընտրուեցաւ Տ. Գ. Սրբազան Երէջեան ներկաներուն 32 քուէներովը:

Այս անձուկ էջերուն մէջ կուզէինք ամփոփել Նորընտր Կաթողիկոսին

կեանքի մեծ գիծերն ու կարեւորութիւնը բարձրագոյն պատշտման որուն կոչուեցաւ:

1871ին, Իզմիրի արդի Առաջնորդ Ամեն. Տ. Մելիքսեղեկ Սրբազան Մուրատեանց Տեսուչն էր Երուսաղեմի Ժառանգաւորաց վարժարանին, որուն երիցագոյն աշակերտներէն էր Գեորգ Տ. Յարութիւնեան 19 ամեայ պատանին, շէկ մազերով ու երկայն հասակով. միտք զուարթ, երբէ՛ք իտուր, խաղէն չէր խորժեր, բայց կը սիրէր աշխատանքը: Դեռ հազիւ 9 տարուան էի այն թուականին ու վարժարանին աշակերտներէն կ'ըստերագոյնը:

Այդ պատանին Ռումանիոյ Իսմաիլիա փողոտք ծնած է 1852ի Փետրուարին. հայրն էր Բոքովիչ փահանան, գործնական ու լուսամիտ մարդ, որ, փափագելով իր տղուն շալ բարձր կրթութիւն մը, կը դիպէր զանի Երուսաղեմի Ժառ. վարժարանը, որ այն ժամանակն ազգին կրթական բարձր ու կարեւորագոյն մէկ հաստատութիւնը կը նկատուէր, Ամեն. Տ. Մուրատեանց Սրբ-

բազանի Տեսչութեան օրով մանա-
ւանդ:

Դպրոցական քղանը կ'աւարտէ
հոն 1876ին, ու յաջորդ տարին սար-
կաւագ կը ձեռնադրուի:

Գլխուն մագերը կտրելու արա-
րողութիւնը կատարուեցաւ վարժարա-
նին սրահին մէջ, ի ներկայութեան
նորընծային բոլոր ընկերակիցներուն:
Սարկաւագ կը դասախօսէր նոյն վար-
ժարանին մէջ, հայերէն, ճեմատերէն
քարգմանութիւն ու բնապատմութիւն:
Կը յիշեմ թէ՛ ճեմատերէնի մէջ յաջո-
ղակ էր աւելի քան թէ ուրիշ
նու մէջ:

1878ին վարդավառի կիրակին,
երբ հազիւ 26 տարուան էր, վարդա-
պետ ձեռնադրուեցաւ Երուսաղէմի Տ.
Նաայի Պատրիարքին: Քստաստօրեայ
ապաշխարանէն յետոյ շարունակեց իր
պատշոնավարութիւնն իբրեւ ուսուցիչ
Ժառ. վարժարանի, վարելով նաեւ
Ս. Աթոռին Քարտուղարի պատշոնը:

1888 ին Ամեն. Տ. Յարութիւն
Պատրիարք Ս. Երուսաղէմ առաջնոր-
դելու համար հրապարակ գնաց Կ. Պո-
լիս: 1890ին ծայրագոյն վարդապե-
տութեան աստիճան առաւ, ու վանքին
կողմէն Ռումանիա ու Երուսաղիմ միւս
հայ գաղթավայրերն այցելեց նուիրա-
կութեան պատշոնով, զոր վարեց
գովելի ձեռնհասութեամբ մը, մանա-
ւանդ, ուսմաներէնի ու ճեմատերէնի
իր հմտութեամբը յաջողեցաւ կազմա-
կերպել նոյն հայ գաղութներուն մէջ
առաջնորդութիւնները:

Յետոյ, Կ. Պոլսոյ Երուսաղէմա-
տունը մնաց ասեւ մը, իբրեւ օգնական
Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Սի-
մէոն Արեւախի. Սէճերեանի, որ ըս-
կըսած էր ծերութեան սկարութիւններն
զգալ, ու երբ 1895ին վախճանեցաւ
Տ. Սիմէոն Արեւախի, յաջորդեց անոր
իբրեւ Փոխանորդ Պատրիարքական, Ե-
րուսաղէմի Միաբանութեան Ընդհ. Ժո-

ղովոյ միահամուռ որուսմամբը:

Այդ բուականէն կ'սկսի անա՛ ծա-
նօթանալ մայրաքաղաքին երեւելի անն-
աւորութեանց, որոնց հետ կը սրէր
սիրտը: Կը սրէր յանախ այցելու-
թիւններ սալ ժողովուրդին. դասակարգ-
ներուն մէջէն նախընտրած է դիրակե-
ցիկները, արանցմէ կը սիրուի ալ Քա-
րոզները համեմելու արձեւտէն կը հաս-
կընայ. գիտէ հաւասարեալ ամբոյսին
հոգեբանութիւնը. ուր ուր երբայ, յար-
գանք ու համակրանք կը գտնէ. լաւ
կուտէ լաւ կը խմէ, բարոյականին
տէրն է. գտնէ այս եղած է իր շուրջ
ստեղծուած հանրային կարծիքը: Ու
այս կարծիքին վրայ աւելցուր Երուսա-
ղէմի Միաբանութեան յասուկ սէրն ու
գուրգուրանքը զոր ունի ցարդ իր վառ-
մեղէնմին կազմող անդամին համար,
կը ձեռնադրուի 1898 ին Եպիսկոպոս
Վեհ. Հայրիկէն:

Ազգ. Պատրիարքարանի վարչական
ժողովներուն ալ մասնակցած է եւ ան-
դամակցած Կոնստանտնուպոլիս, ուր
երկու տարի պատշոն վարած է:

Այս ամեն պատշոններուն մէջ ցոյց
տուած է այնքան ձեռնհասութիւն որ-
քան ուղղամտութիւն. բաղդն ալ շատ
օգնած է իրեն: Ազգային անուելի փո-
թորիկներուն՝ իր նաւը պիտոյ մը խա-
րախած է Երուսաղէմասան կողին. բաղ-
դաո՛ր եկեղեցական ու, գաւառները
կամ մայրաքաղաքին աչքի զարնող մէկ
թաղը Քարոզչի կամ Առաջնորդի
պատշոն չէ՛ վարած: Ու այս բաղդա-
նորութեանը կը պարտի իր միակ առաւե-
լութիւնը միւս դժբաղդ եկեղեցականաց
վրայ, չ'ենթարկուելով անոնց պէս
Դրան կամ Երկրորդի կասկածանքին: Կի-
լիկիոյ նորընտիր կաթողիկոսը գերծ է
ն եւ է քաղաքական կասկածէ, ու այն
աստիճան գերծ, որ շատերուն կարծել
իսկ կուտայ թէ թրքաւէր մըն է անի:

Ո՛չ, թրքաւէր չէ՛, բայց թէ հայ-
րենաւէ՛ր է, հո՛ս է հարցը:

Անհոգութեան անբուժէն կիսազերծ շեղ Մայր-Տանար մը, քովիկը 17-18 տարուան գոյութեամբը ծանօթ փոքրիկ դպրոց մը, հինաւորց դարպասուն մը, քանի մը քանդուած խուցեր, ու անմշակ մնացած ընդարձակ այգեսան մը, բոլորը քոչափակուած պատկանելի պարխապի մը մէջ որ Սիս քաղիքն գրեթէ կէտը կը բռնէ. գազաշէտ ծերունի եպիսկոպոս մը, մէկ երկու կուսակիցի սենակեացներ, ու մէկ երկու ալ աշխատանքներ. անա՛ Սոյ Մայր Վանքը, որուն Ս. Աթոռը բազմելու կոչուած է մեր Նորնիք Հայրապետը, որ պիտի հովուէ Կիլիկիոյ 24 թեմերը, ամենն ալ. առանց բացառութեան, վերջին Մեծ-Ջարդերուն հետեանմով ծայրագոյն թուառութեան մասնուած:

Կիլիկեցիները, իրենց բուժները սալով Տ. Գեորգ Սրբազան Երէցեանի, կը յուսան զսնել Նորին Սրբազանութեան մէջ բառականաչափ կամքի ոյժ մը, կարենալ մահաւելու համար դժուարութեանց դէմ, որոնք մէկէ աւելի են:

Ուրեմն Նորնիք Կաթողիկոսին վրայ դրուած յոյսերը պիտի ազդարանան եթէ

1. Մայր Վանքը վերանորոգուի, նորանոր շինութիւններով:

2. Ժառանգաւորաց վարժարան մը հաստատուի հոն, Արմաշու Դպրէվանիքին ծրագրովը:

3. Տպարան մը բացուի, կառավարութեան թոյլտուութեան չափովը, Կաթողիկոսութեան բերան եղող ամսօրեայ Հանդէս մը նրաստատելու եւ ուրիշ ազգօգուտ երկասիրութիւններ սպառելու համար:

4. Նոր Միաբանութիւն մը կազմակերպուի:

5. Կիլիկիոյ 24 թեմերուն մէջ ձեռնհաս առաջնորդներ կարգուին, բնականաբար Ազգ. Պատրիարքարանի համա-

հան հասանութեամբն ու գործակցութեամբը:

6. Կիլիկիոյ զանազան վանքերուն մէջ նոր որբանայներ բացուին, բարդուելով արդէն գոյութիւն ունեցողներուն վրայ:

7. Ու եթէ, որ ամենակարեւորն է, Սոյ Ս. Աթոռին կալուածներուն ու իրաւունքներուն բարւո՛ մասակարարութիւնը սեռական հիմերու վրայ դրուի:

Առ այժմ այս համառօտ տեսութիւնն ընելէ յետոյ, սրեանց կը խնդակցինք այս յաջող ընտրութեան ու կը մաղթենք որ ԱՄՆԵՆ. Տ. Տ. ԳԷՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ԵՐԷՑՑԵԱՆ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեանը մէջ գրաւէ ոսկեգօծ էջ մը, իր ազգաւէն սիրագործութիւններովը:

Ա. Զ. Դ.

Ա. Գ. Ե. ՔՍԱՆԴՐՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄՍՏԵՆԱԴԱՐՍՆ-ԼՍՍՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի ծանուցանել Արգայ հասարակութեան թէ՛ ի նպաստ Հաստատութեան կազմուած վիճակահանութիւնը պիտի քաւուի առաջիկայ 1902 տարոյ յունուարի 5ին (Ն. Տ) կիրակի օրը, երեկոյեան ժամը 4 ին, նոյն Հաստատութեան սրահին մէջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Դահլիճ, 23 Դեկտեմբեր 1901

Այսօր առաջին տարեգարձն է ժամանման յեղիպտոս Դեր. Յովսէփ: Ս. Արքեպիսկոպոս Այվազեանի: Տակաւին ամեն մտքում նոր ու թարմ է այն մուշեքանչ ընդունելութիւնն որով եղիպտոսայն առանց դասակարգի խրորութեան՝ ընդունեց իւր նորընտիր Ս. Առաջնորդը: Սոյն սգևորութեան, ա-

ւա՛ղ, վաղիւ յաշորդեց մի այլ զգա-
ցում — յուստիաբուժիւն, որուն, կար-
ծես, նախագուշակն լինէին Ն. Ս. նոյն
օրեր թէ՛ յԱղեքսանդրիա և թէ՛ ի
Գահիրէ Եկեղեցւոյ Ս. Բեմերէն միմե-
անց ներհակ արշասանած երկու քա-
րազներն. միում էր՝ «Առաջնորդ եւ ոչ
Առաջնորդուող», իսկ երկրորդում «ձեր
եւ անկարող ո՛ր եւ է հիմնական բարե-
նորոգման ձեռնարկելու»:

Իսկ յառաջիկայ ուրբաթ՝ տարե-
դարձն է գումարման Երես. Ժողովոյ,
որուն զառաջինն յիտի նախագահէր
Ս. Առաջնորդնիս, գալուցական կենսա-
կան խնդիրն լրջօրէն քննելու համար,
որպէս կը հաստատէին ցրուած հրաւի-
րագրերն, և յորում, ո՛վ գալմանաց,
Ն. Ս. զառաջինն պահանջեց իւր յետն-
եալ ամսականներն (իմա՛ մարտէն մին-
չև դեկտեմբեր), զոր ժողովն առանց
ո՛ր և է առարկութեան ընդունեց, քանի
որ վսեմ. Ատենապետ Բաշտի կը յայ-
տարարէր թէ՛ Ն. Ս. առաջաշիւղած օրն
իսկ Եգիպտոսի Առաջ. Աթոռն բազմել
չէր մերժած: — Որքան փափաքելի էր
որ ամիսներէ հետէ աւետեալ գումար-
ումն գոնէ սոյն տարեդարձին վերջ-
նականապէս տեղի ունենար:

Այլևս զանց կ'ընեմ Ն. Ս. միամ-
եայ գործունէութեան ուրուանկարն
ընել. գուցէ խորին վիշտ և թախիժ
առթեմ Առաջնորդական ծերացեալ
սրտին. այո՛ կը հրաժարիմ սոյն հայ-
եցի պարտականութենէս. դա աւելի
անգուժ գրիչներու գործ է: —

Բայց սոյն միամեայ ընթացքում
նկատուած է որ Ն. Ս. իւր Հայ Եկե-
ղեցեցական՝ բարի և զգայուն սիրտ մը
կը կրէ յինքեան. սիրով յանձնառու
եղած է Մայրաքաղաքիս Սրբախնամ,
Ազքատախնամ ու Լոսարան-Ընթերցա-
տուն ընկերութեանց իւր ամսեայ լու-
ման (1) ընձեռել՝ միևնոյն ժամանակ


(1) Ինչպէս որ պիտի վարուէր ա-
մեն պարսնանուսչ ազգային:

առանձինն հոգածութեան առարկայ
ըլած է Վասպուրականի Սրբախնամն
յօժարելով որդեգրել որը սանուհի
մի երեքամեայ պայմանաժամաւ,
երախտագէտ սրտիւ յիշելով ժամա-
նակին ի Վան կերած ազն ու հացը: —

Քաղցր և մխիթարական է ինձ
յիշատակել նաև որ Ն. Ս. սկսած է ու-
սումնասիրել Եգիպտահայն, որպէս կը
տեսնուի իւր մի քանի շաբաթ առաջ
ի Գահիրէ խօսած քարոզէն. կը դիմէ
ուզղակի ժողովրդին երբ խնդիրն Ազգ-
կենսական հարցերու վրայ կը դառնայ.
Կը պախարակէ տեղացի հարուստն՝ որ
չատ քիչ բացառութեամբ, բոլորովին
անտարբեր կը վերաբերուի առ այդ. ի
վեր կը հանէ ազգուօրէն որ Գաւա-
ռացի Հայն ամէն ուրեք եղած է և է
Պ. Եկեղեցւոյ զարդն ու պարծանքը.
Կը յիշէ անզուգական բարերարն Վա-
նեցի Կարապետ Գալուստը, որոյ կտա-
կած հարստութեան տարեկան եկա-
մուտովն է— 1000 Եգիպտ. ոսկ. — որ կան-
գուն կը մնայ միակ Աւսումնարանին:
Ապա յառաջ կը բերէ մի այլ կենսա-
կան հարց, որ այնքան մօտիկ է հայու
սրտին. Կ. Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի
նպատաւարումն. կը յորդորէ ու կը
կիրախուսէ շերմագին ժողովուրդն իւր
լուման, որպէս միշտ, այս անգամ ևս
չխնայել Ազգի Տան՝ դնելով գէթ ա-
նոր հրապարակ հանած Օրացոյցէն:

Այս ամէնն բարի, Սրբազան՝ բայց
ինչո՞ւ ա՛յդքան անհոգ կը վերաբերուիք
Դուք՝ օրինակելի բարեգործին սրտին
այնքան մերձ հիմնարկութեան հան-
դէպ: Այդ Տան մէջն է որ պիտի կըր-
թուի Գաւառացու միակ յոյսն ու ա-
պագան — Զուակը: —

հԱՉՈ ՁՍՆ



ՔՐՈՆԻԿ

ԱԶԳԱՅԻՆ

— Ն. Վ. ՊՕՂՈՍ ԲԱՇՍ. ՆՈՒՊՍԻ այս հինգշաբթի օրուան նեպրնացով ժամանեց քաղաքս, ուր պիտի մնայ ժամանակ մը: Նորին Վսեկութիւնը բարեկամական շրջանակի մը մէջ յայտարարած է թէ՛ միակ փախազն է որ վերջ դրուի ներկայ շփոթութեան ու զտեղ կացութեան, անշապաղ ընտրութիւնները կատարուելով ազգային օրէնքին համաձայն:

Կ'իմանակն նոյնպէս թէ Նորին Վսեկութիւնը ժողովուրդին գոհունակութիւնը գրաւած է Առժ. Թաղ. Խորհուրդին յուծուելուն ու այնքան անխնայ հասարակութիւնն իր ստաջող հրատարակութիւններով վրդովող ու մտեր գայրակեցնելով հոնչակ հանող գրագրին պաշտօնակուները:

Սակայն, ժողովուրդն ա՛յն ասեւ միայն գոհ էր ուրախ պիտի ըլլայ, երբ ազգային գործերուն ղեկավարութիւնը յանձնուած ժողովն այնպիսի անձնաւորութեանց ձեռնարկուն մէջ, որոնք իրենց ձեռնհասութեամբ ու պարսանակաչութեամբ պիտի յաջողին մեղքեղէն վերցնել մեկէ անէլի դժգոհութեան շարժառիթներ, բարեկարգելով մանաւանդ Ազգ. Երկ. վարժարանը, ուր պիտի է ձուլուի մեր նոր սերունդը:

— ԿԱՐՆԱՅ ԵՐԿՐԱՅՈՒՆՅԸ. — Պոլսական թերթերը, որոնց հաւասարիմ արձագանգն եղան եւ Արսասահմանիները, կը նկարագրեն ահռելի կացութիւնը, ուր այս պահուն կը գտնուին Կարնոյ մեր արկածեալ հայրենակիցները:

Աղէտը սակալի է արդէն ու ծանր. անելցուր նաեւ վերահաս ձմեռուան անգթութիւնն ու բարբարոս կառավարութեան մեծատեւ հալածանքը, պիտի ունենաս մօտաւոր գաղափար մը ներկայ իրականութեան վրայ Մայր-Հայրենիքի այդ մասին բնակչութեան:

Արժ. Հ. Զաւէն Վ. Տէր Եղիսեանի «հրաւեր գրութեան»ը հո՛ն է, անձն Հայու աչիւրէն խլելու համար սաք

սաք արցունքներ: Բայց արցունքներ չ'են որ պիտի սփռուին ու փրկեն տարաբաղդ Կարնեցիները: Բնակարանները մեծ մասով քանդուած, եկեղեցի, վարժարան եւ ուրիշ հանրային հաստատութիւններ խախտուած. ու բնակիչները վրաններու սակ, ձիւնին ու բուրբիս դէմ, երթեկուորութիւնք ընդհանուած, առուսուրք մեռած. մէկ խօսքով, կեանքը կա՛նգ առած է հոն, հայութեան սրտին ու հոգիին ա՛յնքան մօտիկ Հայաստանի Մայրաքաղաքին մէջ:

Ո՛ր պիտի յանգի վիճակը մեր այդ դժբաղդ եղբայրներուն ու բոյրերուն, եթէ չը հասնին օգնութեան ձեռքեր:

Բնութիւնը բուրբեղուն ու երկրացունցեղունը, կառավարութիւնն ալ իր տարբերուն ու բուրբեղունը, պատահաւ դարձած են Հայուն գլխուն: Ո՛վ պիտի սրբէ անոնց արցունքը, եթէ ո՛չ անոնք որ արսասահմանի մէջ ապաստանած, ազատած են իրենց մարթը, կ'ապրին ազատ, հոգ չէ թէ տապալանեալ հարեն իրենց հացը...

Գրասիրութեան մեծ օրինակը կուգայ ԻՊՐԱՀԻՄԻՅԷ ՇԱՐԳԻՅԷԷՆ, ուր ափ մը Հայեր կան, եւ ուր սակայն ապրողները՝ հեմարիտ Հայեր են, սրտով ալ Հայ լեզուով ալ Հայ: Ան այդ պատուական ու յաւէտ յարգելի Հայերն են որ կը փութան հանգամանակել ոչ-խոսելի գումար մը Կարնոյ արկածելոց ի նպաստ ու դրկել զայն ուր ուր անկ էր:

Իսկ մենք, Աղեխանգրիացիներս, որ ա՛յնքան պատշաճօրէն գիտենք պատշաճեղ մեր ազգային իրաւունքները, կարելի՞ է որ անտարբեր մնանք հանդէպ պարսականութեան, որ կը ներկայանայ դէպքերուն անբռնաբարելի ուժովը:

Կարին այսօր կարօ՛՛ս է, մեզի ձեռք կը կարկառէ եւ օգնութիւն կը հայցէ. օգնութիւն հայ մայրերուն համար

ու ֆոյրերուն, որոնք սառույցին վրայ մնացին մեկ ու անօթի. օգնութիւն հայ ծերերուն համար ու մանուկներուն, ցուպի կոթնածներուն ու օրօրոցը լացողներուն համար... : Օգնութիւն մեր քանարներուն համար ու դպրոցներուն, որոնք ամայացան այսօր, որովհետեւ քահանայ ու վարժապետ, ժողովուրդ ու աշակերտ, դճուրք մնացին. — Օ՛ն ուրեմն, եգիպտաբնակ հայրենակիցներ, սկսի՛նք գործի ու շուքով սկսինք, ու շուքով աւարտենք գործը, որ է գործերուն մեծագոյնն ու ամենասիրալին, արագօրէն գործերուն ու ամենանախաճը — ԵՂՔԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԱՐՆՈՅ ԱՐԿԱԾԵԱՂՆԵՐՈՒՆ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

— ԴԵՍՊԱՆՆԵՐՆ ՈՒ ԴՈՒՌԸ. Դեսպանները, հետեւելով Անգլիոյ օրինակին, համիմաս ծանուցագրով մը դիտարկութիւններ կ'ընեն Դրան՝ խուզարկութեանց արտօնութեան վերաբերող հանգիստն ու օրէնքին երբոք գլխուն դէմ, որուն ոգին, կը յայտարարեն, անհայաս է արտօնատար, նոր առաջարկներ չը փառալերեր ու համաձայն չէ կայսրութեան շահերուն, որուն համեային հարսութիւնը կարեւոր հասոյթ մը կը կազմէ. Հետեւաբար, դեսպանները կ'ուզեն բանաւոր ու ընդունելի կարգադրութիւն մը:

— ԽՐԻՍՏՈՍԱՐԴ ՇԷՐԻՑԻ արարողութեան առթիւ որ տեղի կ'ունենայ ամեն տարի Բամազանի 15ին, բաց ի 300 էն, նոր նոր ձերբակալումներ ալ եղած են. Այդ օրը Սուրբանը Սքամայօլ կ'անցնի ծովով կամ ցամախով, համբուրելու համար Մարգարէին վերակուն:

— ԵՐԻՏՄԱՍԱՐԴ ԹՈՒՐԻՔԵՐՆ ՈՒ ԴՈՒՌԸ. Ամսոյս ծին Պոլսէն խօսիլականով Աղեփաւորիա մեկնեցաւ փողոցական գործակալներէ բաղկացած պատուի.

րակութիւն մը, որուն պատճառով է, կ'ենթադրուի, եգիպտոսի Երիտասարդ Թուրքերը ստիպել վերադառնալ Կ. Պոլիս եւ ի հարկին ձեռք բերել անոնց արտօնումը:

— ՌՈՒՍԻՆՈՅ ՌԱԶՄԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔԸ. — Վերջերս բոլոր պահանջատերերը կարծես խօսք մէկ ըրած կը բախեն Բ. Դուրը. Ֆրանսայէն ու Աւստրալիայէն յետոյ անա՛ Ռուսիան է որ կը պնդէ թէ պէտք է Սան Սթեփանօյի դաշնագրով ընդունուած տուրքներն յետեւալ պարտք վճարուի անյապաղ: Դուրը պէտք է որ տարուէ տարի 100,000 օսմ. ոսկի վճարէ, մինչդեռ մինչեւ ցարդ միայն 50,000 ոսկի կըրցած է վճարել: Ըսել է թէ 1,100,000 ոսկի պարտք ունի: Պ. Չինովիէ՛՛ այս գումարին վճարման ապահով երաշխաւորութիւններ կը պահանջէ Դուրէն, որ տարած խոստումներով կը փորձէ աստե՛մ ալ փախել իրերու կացութիւնը, որ սուկալի է. կուս մը չը կայ բոլոր եկամուտները յաշկացուած են, Հանքային Պարտուց Սնտուկին, կամ գանձան դրամասանց: Իրաւ է որ Ռուսիան այդ գումարները վճարել տալու մտնով չէ՛ որ բռնած է այս ընթացքը: Ընդհակառակն ի՛նք ալ գոհ կ'ըլլայ որ անվճար մնան իր պահանջները, որ պէտք զի Դրան վրայ ազդելու միջոց մ'ունենայ միտ: Երբ ռուսական Դեսպանը տուրքներ վճարման խնդիր կը յարուցանէ, կը նշանակէ թէ ուրիշ բան կ'ուզէ անի: Արդէն, Դուրը տուրքներ համար երեք տարի առաջ յաշկացուցած էր Փոքր-Ասիոյ քաղաքացիացի եկամուտը, բայց զայն յետոյ ուրիշ տեղերու յաշկացուց, առանց փոքր դիտարկութիւն մ'ըլլալու Ռուսիոյ դեսպանին կողմէն: Ասոյք է որ Ս. Բեքրայուրիի դահլիճը պիտի չը դիմէ ներողական միջոցներու, պարտք մնացած տարեւորները պիտի մնան միտ պարտք ու պիտի առիթ ընծայեն ռուսական կառավարու.

բեան միջամեղու Թուրքիոյ գործերուն մէջ, կամ, երբ յարմար դասէ, նկուսմ ի գործ դնելու Գրան վրայ:

— **ՊԷՆԿԱՋԻ** ի մէջ խոռվուրիւններ ծագած էին, որովհետեւ օսմ. կառավարութիւնը զինուորական պարսաւորիչ ծառայութիւն մի հաստատել փորձած էր այդ նահանգի մէջ: Մտալիւ էր հոն կազմելու ընդ ամենը 12000 հոգիէ բաղկացած *հանիսիյէ* եօթը գորագունդեր:

Զինուորագործեան գործողութիւններն սկսած չ'սկսած՝ փոքորիկը պայքած է. Ծասեր սպաննուած են:

Հեռաւոր նահանգներուն մէջ կառավարութեան ազդեցութիւնը խիստ սկաւ է, կամայ ալ կամայ Դուռը տեղի պիտի տայ, նոր ապսամբութեանց առջեւն առնելու համար:

— **ՓՈԹՈՐԻԿԻՆ ԱԻՆԵՐՈՒՄՆԵՐԸ.** —

Կ. Պոլսոյ մէջ ձմեռը սաստիկ է. ծովուն վրայ շատ մը զոհեր ըրաւ փոքորիկը. քանի՜ քանի առագաստանաւեր ընկղմեցան: Մարմարայէն հասնող շոգեմաները խիստ շատ սանջուած են փոքորիկէն ու ժողոված շատ մ'ընկղմաներ, բոլորն ալ կղզեցի Յոյներէն, որոնք ալիքներուն կասաղութիւնը ծաղրող քաջասիրտ նաւագներ են:

Փոքր Ասիոյ մէջ, փոքորիկը պատնաւեց ահագին վնասներ: Անասօլիի երկաթուղիի գիծը ջուրերն առին տարին Պիլէնիքի մօտ:

Ապրանքներու փոխադրութիւնը կարելի պիտի չ'ըլլայ դեռ քանի մ'օր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

S. ՄԵՍՐՈՊ ԿԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆԻ Քառանկալական խնդրի շուրջը, *սպ.* 1901, Թիֆլիս, 120 էջեր բաղկացած հատոր մը, գինն է 50 կոպէկ:

— Ընթերցողներու ուշադրութեանը, նոյն քանակաւի երկաթուղիները, *սպ.* 1901 Քարաւ. գինն է 10 կոպէկ:

Այս երկու գիրքերը իրենց շահեկան պարունակութեամբն իրօք արժանի են ուշադրութեան մեր այն ընթերցողներուն, որոնք նախանձախնդիր են ազգային եկեղեցականութեան պահպանելու ու բարոյականին: Զերմով կը յանձնարարենք մեր ընթերցողներուն այս նոր ու շահեկան հրատարակութիւնները:

Վ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ԿԱՀԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉԲ

Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսելի հայ տուններուն ծանօթ յանախորդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել, *Աղդարիւն, Ռիւել-էլ-Զահապի,*

Attarine Ruelle-el - Zababy

ՀՐԱԻԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

1887

ԺԶ. ՏԱՐԻ

1902

ՆԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ..

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Ուսումնասիրես ՆԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, կը մտնէ իւր գոյութեան 16րդ շրջանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ

Տարեկան ճանկասան էլ Ալլուր 10 ֆր.

» Ռուսասան 4 րբ.

ԽՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԷՆ

A la Rédaction de la Revue

« HAN TESSE »

Vienne (Autriche) VII 2 Mechilbaristengasse 4.

«ԳԵՂՈՒՆԻ»



«ԳԵՂՈՒՆԻ» կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ :

Տարեկան Բաժնեգրինն է 3 Ֆրանկ. 1 րբ. 50 կոպեկ :


Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէտը առանց կրօնի խտրութեան, կը յատկացնենք Ազգիս Որբիկներուն :

Ապառիկ բաժանորդագրութիւն բացարձակապէս չընդունուիր. Գինը կանխիկ է :

Բաժնեգրին, նամակ, եւ այլն, Ողբակի հետեւեալ հասցէին յղելու է

«PAZMAVEB»

S^t. LAZARE VENISE (ITALIE)



ԴԵՂԱՐԱՆ


ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ջնտիր դեղորայք, սրեսիալիքէներ եւ հանքային թարմ շուրեր :

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին :

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ :



SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդգէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդգէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Յամաքային փոխագրութեանց արկածներու դէմ :

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսգոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփասնորիս, պզտիկ Մեկնիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ